

ԷԼ Ի՞՞ՆՉ ՀՈԳԵՒՈՐ

Էլ ի՞նչ հոգեւոր,
 Երբ մահուան հացից նա համ չի առնում
 Երբ մահուան նամրից նա ետ չի դառնում
 Եւ հազար ու մի պատճառ է քռնում.
 Թէ ինքն ինչու է մահուան մէջ մտնում.
 Բա էլ ինչո՞ւ է Աստծոյ տուն գնում:

Էլ ի՞նչ հոգեւոր,
 Երբ չի զգացել ապտակը կեանիի,
 Երբ չի ենթարկուել ծաղր ու ծանակի,
 Փուշը չի արել իրեն ամկողին,
 Անզիշում սրտով ընկել է կողին:

Էլ ի՞նչ հոգեւոր,
 Որ դեռ ծիծաղը չի փոխել լացի,
 Զի առել համը երկնային հացի,
 «Որդեծնութեան» ցաւը չի տեսել.
 Բայց միշտ ասում է. «Ճաւել եմ ես էլ»:

Էլ ի՞նչ հոգեւոր,
 Որ ունայնացման նամրով չի անցել.
 Որ Գողգորայի խաչին չի խաչուել.
 Կամ էլ՝ փրկութեան դռնով չի մտել,
 Յաւիտենական հանգիստ չի գտել...

ՄԻՇԱ ՍՎԱՐԵԱՆ